ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան, Գ. Քոչարի 21[ա] ☎ 54-35-02

27/ 12/ 2013թ. N 05- 815

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման շրջանակային համաձայնագիր կնքած և որպես հնարավոր մասնակից գրանցված ընկերությունների տնորեններին և անհատ ձեռնարկատերերին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կողմից 2014 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-11/3 «Գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման» շրջանակային համաձայնագրով նախատեսված Ապրանքը: Սույն ծանուցման ծածկագիր է հանդիսանում **«ԿԸՀ ՏԻՄ – ՇՀԱՊՁԲ - 11/3/2»**, որի շրջանակներում կնքվելու է պայմանագիր: Պայմանագիրը կնքվելու է համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենք, ք. Երևան, Գևորգ Քոչարի 21 ա հասցեով, 1-ն հարկ, ֆինանսատնտեսական վարչություն՝ Ե. Սամվելյանին , մինչև 2014թ. հունվարի 14 -ը, ժամը 16[30] - ը, հեռ. 56 28 57:

Հայտերը կբացվեն կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքում ք.Երևան, Գևորգ Քոչարի 21 ա հասցեում, 1-ին հարկի դահլիճում, 2014թ. հունվարի 14 -ին, ժամը 16[30]-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Առդիր՝ 10 էջ:

Հարգանքով՝ Լ.Գրիգորյան

Կատարող՝ Ե.Սամվելյան, հեռ .56-28-57